Խնդիրները, որոնց ականատես եղանք հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների նախագծի շրջանակում

1. Առաջինը՝ դա նախագծի վերաբերյալ իրազեկվածության բացակայությունն էր, թե ուսուցիչների և թե տնօրենների շրջանում: Երբ նշում էինք, որ ԿԳՄՍ նախարարությունը ուղարկել է համապատասխան շրջաբերականները, ասում էին, որ չեն ստացել: Այստեղ հարց է առաջանում, ինչքա՞ն արդյունավետ է մշակված պետական լիազոր մարմնի և հանրապետության բոլոր դպրոցների միջև հաղորդակցության մեխանիզմները:

2. Երկրորդ՝ ուսուցիչներն ազատ են ընտրելու վերապատրաստող կազմակերպությանը, այս փաստի մասին բազմիցս նշել է ԿԳՄՍ նախարարությունը, սակայն մեր փորձը ցույց տվեց, որ այդ մոտեցումը ոչ բոլոր դպրոցներում է կիրառվում: 40-ից ավելի ուսուցիչներ տարբեր մարզերից, ովքեր դիմել էին մեր կազմակերպությունում ՏՀՏ կիրառումն ուսումնական գործընթացում բաղադրիչով վերապատրաստվելու համար, երբ գնացել էին իրենց դպրոցներ համապատասխան դիմումը լրացնելու, պարզել էին, որ դպրոցի տնօրենները արդեն ընտրել և կնքել են պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ կամ եթե դեռևս չէին էլ կնքել պայմանագրերը, միևնույնն է ուսուցչին կանգնեցրել էին փաստի առջև: Կային բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր կաշկանդվեցին նույնիսկ նշել այն կազմակերպությունների անունները, որոնց հետ իրենց դպրոցի տնօրենները առանց իրենց տեղեկացնելու պայմանավորվածություններ են ձեռք բերել: Հիմնականում մի քանի կազմակերպությունների անուններ էր նշվում մեզ դիմած ուսուցիչների կողմից, որոնք առանց ուսուցիչների կարծիքը հաշվի առնելու պայմանավորվածություններ էին ձեռք բերել վերապատրաստումներ իրականացնելու համար իրենց դպրոցների տնօրենների հետ: Այս դեպքում ճիշտ չէ կրկին ուսուցչին մեղադրելը, ով չի կարողանում պաշտպանել իր իրավունքները, քանի որ պետք է իրականում քաջատեղյակ լինել ինչ մոտեցումներ, գործելաոճ, միջանձնային փոխհարաբերություններ են տիրում դպրոցում: Մինչև հիմա նախարարությունը նման դեպքերը բացառելու ուղղությամբ ինչ աշխատանքներ է իրականացրել և կարգազանց կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու ինչ մեխանիզմներ են մշակված:

3. Հաջորդ խնդիրը վերաբերվում է երաշխավորված կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումների որակը և արդյունավետությունը ստուգող մեխանիզմների առկայությանը: Ըստ առկա մեխանիզմի վերապատրաստող կազմակերպությունն ինքն է տրամադրում համապատասխան հաշվետվությունները, որոնք հիմնականում տեխնիկական բնույթի են, այսինքն՝ կազմակերպությունը ներկայացնում է վերապատրաստումներին մասնակցած ուսուցիչների մասնակցության գրանցման մատյանը, վերապատրաստման ծրագիրը, ժամանակացույցը, կրեդիտների տրամադրման արձանագրությունը, ինչպես նաև վերապատրաստմանը մասնակցած ուսուցիչների կողմից

վերապատրաստման գնահատման անանուն ամփոփաթերթը: Այս տեղեկույթը կազմակերպության կողմից ուղարկվում է secretariat@escs.am էլ. հասցեին: Բացի այդ ուսուցիչները ըստ ԿԳՄՍ նախարարության հնարավորություն պետք է ունենային գնահատել կազմակերպության աշխատանքը https://emis.am կրթության կառավարման տեղեկատվական համակարգում, սակայն տվյալ համակարգում համապատասխան բաժին, կարծես թե չկա: Դա են վկայում, թե վերապատրաստում անցած ուսուցիչները և թե մենք որպես վերապատրաստող կազմակերպություն, որը այդպես էլ չստացավ համակարգում նախատեսված համապատասխան էջ մուտք գործելու տվյալները: Այս հարցը նաև ուղղել ենք https://emis.am հարթակի պատասխանատուներին, սակայն արձագանք չենք ստացել: Արդյո՞ք https://emis.am հարթակում լիարժեք աշխատում է ուսուցիչների վերապատրաստումներին վերաբերվող անհրաժեշտ բաժինը:

Մեր կազմակերպության կողմից իրականացվող վերապատրաստումների ընթացքին ծանոթանալու համար առցանց դասընթացների հղումը ուղարկեցինք, թե ԿՁՆԱԿ հիմնադրամին, որը լիազորված է ԿԳՄՍ նախարարության կողմից վերապատրաստումների մշտադիտարկումները իրականացնել և թե ԿԳՄՍ նախարարությանը, սակայն, պետք է ցավով նշել, որ պատասխանատու վերոնշյալ կառույցների կողմից գոնե մեկ անգամ դասընթացների ընթացքին ծանոթանալու քայլ չարվեց:

Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com> Mon, Nov 22, 2021, 12:56 PM

to Կրթության

Հարգելի ԿՁՆԱԿ հիմնադրամի աշխատակիցներ,
«Համագործակցային կրթական ծրագրեր» հկ-ն, այս ընթացքում, իրականացնում է սահմանամերձ բնակավայրերի դպրոցներում աշխատող ուսուցիչների՝ ՏՀՏ կիրառումն ուսումնական գործընթացում բաղադրիչով վերապատրաստումներ, սակայն այդ վերապատրաստումները նախատեսված չեն այս տարվա՝ մինչև նոյեմբերի 30-ը, հերթական ատեստացիայի ենթակա ուսուցիչների համար: Այս դեպքում ինչ տեսակի հաշվետվություն պետք է ներկայացնել, եթե կան այլ, համապատասխան ձևաթղթեր, ապա կխնդրեմ ուղարկել: Վերապատրաստումների շրջանակում կազմակերպության աշխատանքի անանուն գնահատումը ուսուցիչները պետք է անեն **emis.am** կայքում: Դասընթացը բարեհաջող ավարտելու դեպքում կտրամադրվի համապատասխան կրեդիտով վկայական: Վկայականի կազմության վերաբերյալ համաձայնեցումը ԿԳՄՍ նախարարության աշխատակցի հետ արդեն իրականացրել ենք: Նշեմ, որ դասընթացները ուսուցիչների համար կազմակերպվում են անվճար:
Կից ֆայլում դասընթացների ժամանակացույցն է:
Ստորև առցանց դասընթացների հղումն է:
https://us02web.zoom.us/j/82818704574?pwd=dncwRXhmQWxkc1YybU05T2VWZDRudz09&fbclid=IwAR1nlxpFL6ML6tUZeizOKixg7T3fLr9QLL9d9ZbNeMhzMXiq2niCJ6corzs#success

Հարգանքով
<<ՀԿԾ>> հկ-ի նախագահ՝
Լուիզա Թոփչյան

Այստեղ հարց է առաջանում, ինչ մեխանիզմներով է ստուգվում երաշխավորված կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումների որակը և արդյունավետությունը, չէ որ կազմակերպությունների կողմից ներկայացված տեխնիկական հաշվետվությունները բավարար չեն պատկերացում կազմելու որակի վերաբերյալ:

4. Հաջորդ հարցը վերաբերվում է 1 ուսուցչի վերապատրաստումների համար նախատեսված գումարի չափին: Մինչեւ օրս պարզ չէ, թե ինչ տրամաբանությամբ եւ մեխանիզմներով է ԿԳՄՍ նախարարությունը հաշվարկել 1 ուսուցչի համար նախատեսված վերապատրաստումների գումարի չափը:

92-110 ժամ առկա ձևաչափով դասընթացների դեպքում յուրաքանչյուր վերապատրաստվող ուսուցչի համար ԿԳՄՍ նախարարությունը առավելագույնը նախատեսել է 24.000 դրամ, իսկ հեռավար ձևաչափով դասընթացների դեպքում, նույն ժամաքանակի համար ՝ 20.800 դրամ, իսկ գումարի բաշխումը, ըստ բաղադրիչների, կատարվում է դասաժամերի տոկոսային հարաբերակցությամբ: (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հուլիսի 02-ի N 46-Ն որոշում) https://escs.am/am/news/9310

Ըստ չափորոշչի նախատեսված է 8 բաժիններից կազմված վերապատրաստում՝ https://escs.am/files/files/2022-03-09/0dadc96dafbf022db2093d0566decd6c.pdf
1. Հանրակրթության բնագավառի օրենսդրություն, 10 ժամ (1 կրեդիտ)
2. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում, 20 ժամ (1 կրեդիտ)
3. Տարիքային հոգեբանություն, 10 ժամ (1 կրեդիտ)
4. Դիրքորոշում և արժեք, 10 ժամ (1 կրեդիտ)
5. Համընդհանուր ներառում, 10 ժամ (1 կրեդիտ)
6. Գնահատում, 15 ժամ (1 կրեդիտ)
7. Առարկայի դասավանդման մեթոդիկա, 30 ժամ (2 կրեդիտ)
8. Հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներ, 5 ժամ (3 կրեդիտ)

որոնք իրապես որակյալ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան մասնագետներ, մասնավորապես՝ կոնկրետ առարկայի մասնագետ, ՏՀՏ ըստ չափորոշչի առանձնացված ծրագրերը և հարթակները տիրապետող մասնագետ, իրավական ոլորտի մասնագետ, հոգեբան: Ստացվում է նվազագույնը 4 մասնագետ է անհրաժեշտ ընդունված չափորոշիչներին համապատասխան վերապատրաստումներ իրականացնելու համար, ովքեր պետք է պատշաճ վարձատրություն ստանան իրենց աշխատանքի դիմաց: Վերապատրաստումները կազմակերպելու համար կազմակերպությունից անհրաժեշտ է առնվազն 1 կազմակերպիչ, ով նույնպես իր կատարած աշխատանքի համար պատշաճ պետք է վարձատրվի, ինչպես նաև ֆինանսական, հարկային պարտավորությունների գործառույթը ապահովող հաշվապահ: Ներկայացվածը այն հիմնական ծախսն է, որը կազմակերպությունը պետք է իրականացնի: Նշենք, որ ըստ ԿԳՄՍ նախարարության վերապատրաստող կազմակերպության դիմում-հայտի՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=150851 կարևորվում է նաև այլ ծախսերը, օրինակ՝ նախատեսվող ճաշի և սուրճի ընդմիջումներ, սննդի կազմակերպման համար համապատասխան տարածքի առկայություն, անհրաժեշտության դեպքում վերապատրաստվող ուսուցիչների փոխադրամիջոցով տեղափոխման կազմակերպում: Նաև պետք է հիշել, որ նախարարությունը նախապատվություն է տալիս առկա ձևաչափով

վերապատրաստումներին, https://escs.am/am/news/12613 հետևաբար կազմակերպությունը պետք է հոգա նաև վերապատրաստումների համար անհրաժեշտ տարածքի և գույքային ծախսերը, վճարի համապատասխան հարկերը:

Ի դեպ ԿԳՄՍ նախարարության սահմանած նորմատիվների համաձայն մատուցվող ծառայությանը, մեղմ ասած, չհամապատասխանող գումարը կազմակերպություններին վճարվում է վերապատրաստումներից հետո (ԿԳՄՍ նախարարությունը գումարը փոխանցում է վերապատրաստվող ուսուցիչների աշխատավայր՝ դպրոց, այնուհետև դպրոցը վերապատրաստումներից հետո փոխանցում է կազմակերպությանը) ինչը նշանակում է, որ եթե կազմակերպությունը չունի տվյալ ծրագրի համար այլ եկամուտներից կուտակված գումար, ապա ընդհանրապես հնարավոր չէ կազմակերպել վերապատրաստումներ, քանի որ կազմակերպությունը վերապատրաստող մասնագետների աշխատավարձը, ըստ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի, պետք է վճարի ժամանակին, չխախտելու պայմանագրի վճարման ժամկետները, հետևաբար վերապատրաստողների՝ աշխատավարձը ժամանակին ստանալու իրավունքը, ինչը ստեղծված համակարգում դառնում է անհնար:

https://www.arlis.am/documentview.aspx?docid=162419

Այս դեպքում շահեկան վիճակում են հայտնվում երաշխավորված կազմակերպությունների ցանկից պետական հաստատությունները, որոնք կարող են օգտագործել իրենց ենթակայության տակ գտնվող տարածքը և գույքը, իսկ ոչ պետական կազմակերպությունները պետք է հավելյալ ծախս կատարեն իրենց տնօրինման տակ գտնվող տարածքն ադապտացնելու համար կամ անհնարինության դեպքում վարձակալեն համապատասխան տարածք: Եթե համարենք, որ մեկ խմբում կարող են ընդգրկվել ոչ ավել քան 30 ուսուցիչ, որպեսզի հնարավոր լինի ապահովել անհատական մոտեցում, արդյունավետ վերապատրաստումներ, մեկ խմբի 92-110 – ժամյա վերապատրաստումը տևում է մոտ մեկ ամիս, եթե վերապատրաստումները իրականացվում են ամեն աշխատանքային օր հինգ ու կես ժամ տևողությամբ, ապա ստացվում է, որ կազմակերպությունը պետք է աշխատի բարեգործության սկզբունքով, իսկ վերապատրաստողները իրենց կատարած աշխատանքի դիմաց ստանան Հայաստանում այս պահին սահմանված մինիմալ աշխատավարձը (լինի դա ժամավճար, թե ֆիքսված աշխատավարձ), այն դեպքում, երբ աշխատանքը ծավալուն է և խիստ պատասխանատու: Այս ամենը վերաբերվում է բարեխիղճ կազմակերպություններին, իսկ անբարեխիղճ կազմակերպությունները պարզապես կաշխատեն քանակ ապահովելու վրա, վերապատրաստողներին պատշաճ չվճարելու ճանապարհով, որի դեպքում միաժամանակ տուժելու է որակը: Իսկ առանձին բաղադրիչներով վերապատրաստում իրականացնելը դառնում է անհնար, օրինակ՝ եթե մասնագիտացված կազմակերպությունը ցանկանում է իրականացնել հանրակրթության բնագավառի օրենսդրության, մեկ այլ կազմակերպություն՝ հոգեբանության, մյուսը՝ որևէ առարկայի վերաբերյալ, 4-րդը՝ ՏՀՏ կիրառումն ուսումնական գործընթացում բաղադրիչով վերապատրաստում, ապա ստացվում է, որ նախատեսված գումարը բաժանում ենք ըստ բաղադրիչին հատկացված ժամաքանակի: Այդ դեպքում ստանում ենք, օրինակ ՏՀՏ կիրառումն ուսումնական գործընթացում բաղադրիչի համար առկա վերապատրաստումը՝

4364 դրամ, իսկ հեռավարը՝ 3780 դրամ յուրաքանչյուր ուսուցչի համար և եթե հաշվի առնենք, որ մեկ խմբում պետք է ընդգրկվեն 30-ից ոչ ավել ուսուցիչ, ապա ինչպե՞ս է, այդ գումարի շրջանակում կազմակերպությունը հոգալու իր հիմնական անհրաժեշտ ծախսերը: Հարց է առաջանում, ԿԳՄՍ նախարարությունում վերոնշյալ հաշվարկը չե՞ն կատարել մեկ ուսուցչի վերապատրաստման համար գումարի չափը սահմանելիս: Պետք է նշել, որ ԿԳՄՍ նախարարությունը 2021 թվականին սփյուռքահայ ուսուցիչների հեռավար վերապատրաստումների համար գրեթե նույն ժամաքանակով (80-120 ժամ) մեկ ուսուցչի համար հատկացրել է 56.000 դրամ, ի դեպ, սփյուռքահայ ուսուցիչների հեռավար վերապատրաստումները, 2-րդ տարին անընդմեջ, պատվիրակվում է ընդամենը 1 կազմակերպությանը՝ ՖԻՉԸՐ ՍՊԸ-ին՝ հիմնադրված 2020 թ. մարտի 13-ին:
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80-%D5%B0%D5%AF.pdf

Վերոնշյալ խնդիրը ներկայացրեցինք ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ նշելով, որ ԿԳՄՍ նախարարության սահմանած նորմատիվների համաձայն շահեկան վիճակում են հայտնվում երաշխավորված կազմակերպությունների ցանկից հատկապես պետական հաստատությունները, որոնք կարող են օգտագործել իրենց ենթակայության տակ գտնվող տարածքը և գույքը, իսկ ոչ պետական կազմակերպությունները պետք է հավելյալ ծախս կատարեն իրենց տնօրինման տակ գտնվող տարածքն հարմարեցնելու համար կամ անհնարինության դեպքում վարձակալեն համապատասխան տարածք և գույք:
https://drive.google.com/file/d/11lcF4XV-eoTThhcYqRhpsKL1VwRRRdcg/view?usp=share_link
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պատասխանից տպավորություն է ստեղծվում, որ բարձրաձայնված խնդիրները, պարզապես չեն հասկացվել հանձնաժողովի անդամների կողմից. մեջբերում հանձնաժողովի պատասխանից՝ «Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային ուսումնասիրության արդյունքում ստացվում է՝ Նախարարության կողմից երաշխավորվող Ցանկում, Կարգով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, կարող են ընդգրկվել ոչ միայն հասարակական և պետական կազմակերպություններ, այլ նաև կրթական ծառայություններ մատուցող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մասնավոր կազմակերպություններ: Ընդ որում, մասնավոր կազմակերպությունների կողմից կրթական ոլորտում համալիր ծառայությունների մատուցումը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության իրականացում, ունի իր առանձնահատկությունները: Մասնավորապես՝ այն ենթադրում է կրթական

ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված ֆինանսական, կազմակերպչական, աշխատանքային և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ այնպիսի տնտեսական գործունեության իրականացում, որը կնպաստի վերջինիս ձեռնարկատիրական եկամտի բարձրացմանը: Նշվածի դրսևորումներից է նաև մասնավոր կազմակերպությունների կողմից տարբեր կրթական ծրագրերի շրջանակում օգտագործվող տարածքը և գույքը: Ստացվում է՝ ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների կողմից դասընթացներն առկա տարբերակով իրականացնելիս կրթական համալիր ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություններն ևս կարող են օգտագործել իրենց ենթակայության տակ գտնվող տարածքը և գույքը: Ավելին, դրա արդյունքում վերջիններս կարող են ստանալ մրցակցային առավելություն այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք առկա տարբերակով չեն մատուցում տարաբնույթ կրթական ծառայություններ: Տվյալ դեպքում, Ձեր գրությամբ բարձրացված հարցն, ըստ էության, կարող է առավելություն տալ ոչ միայն պետական, այլ նաև մասնավոր կազմակերպություններին, ինչը վերոնշյալ իրավական նորմերի համակարգային ուսումնասիրության արդյունքում ունի օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր, հետևաբար չի պարունակում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման առերևույթ հատկանիշներ»:

Մինչև նման պատասխան գրելը արդյո՞ք Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ուսումնասիրել է, թե քանի հասարակական կազմակերպություն կա ոլորտում, որոնք ունեն գույքային նույն հնարավորությունները ինչ պետական հաստատությունները, որոնք էլ հենց համապատասխանում են ԿԳՄՍ նախարարության սահմանած չափանիշներին: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը իր պատասխանում թեպետ նշել է, որ երաշխավորված կազմակերպությունների ցանկում կան հասարակական կազմակերպություններ, սակայն իր հիմնավորումը կազմել է պետական և կրթական ծառայություններ մատուցող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների համեմատության վրա:

Ինչքանով է վերոնշյալ պատասխանը բարձրաձայնված խնդիրներին համարժեք, սպառիչ և համապատասխանում գոյություն ունեցող իրականությանը: Ամբողջական պատասխանը հետևյալ հղմամբ՝
https://drive.google.com/file/d/1XEWmQXkYEcKLI_ieMBR-CsKAJeCVsSAh/view?usp=share_link

5. Հաջորդ խնդիրը վերաբերվում է ԿԳՄՍ նախարարության կողմից լիազորված ԿՁՆԱԿ հիմնադրամի գործունեությանը, որը ստուգում է կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացների մոդուլների, այսինքն՝ կառուցվածքի և բովանդակության չափորոշիչներին համապատասխան լինելը և ուղարկում է նախարարի հաստատմանը, որը նաև իրականացնում է վերահսկողի գործառույթ: Ինչպես է ստացվում, որ վերահսկման գործառույթ իրականացնող կառույցում՝ ԿՁՆԱԿ հիմնադրամում, կան աշխատողներ, ովքեր աշխատում են նաև վերապատրաստում իրականացնող կազմակերպություններում կամ տվյալ

կազմակերպության անդամ են: Այս փաստը ստեղծում է անհավասար պայմաններ վերապատրաստող կազմակերպությունների միջև, չէ որ նաև ԿԶՆԱԿ-ն է հետևում վերապատրաստումների որակին և արդյունավետությանը և այդ մասին տեղեկատվություն տրամադրում ԿԳՄՍ նախարարությանը, որպեսզի վերջինս որոշի արդյո՞ք տվյալ կազմակերպության գործունեությունը համապատասխանում է սահմանված չափորոշիչներին և կարող է շարունակել վերապատրաստումներ իրականացնել, թե ոչ: Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ արդյո՞ք ԿԳՄՍ նախարարությունում մտավախություն չկա, որ ուսուցիչների վերապատրաստումների այս նոր ներդրված համակարգը կմնա մի քանի կազմակերպությունների, այդ թվում պետական, շրջանակում: Համակարգը անհավասար մրցակցային պայմաններում գրավիչ չի լինի նոր կազմակերպությունների համար, որոնք կարող են պարբերաբար դրական փոփոխություններ և արդյունավետ մոտեցումներ բերել համակարգ, նպաստել համակարգի զարգացմանը: Ի դեպ, մինչ օրս չկան հրապարակային տվյալներ, թե որ կազմակերպություններում, քանի ուսուցիչ է վերապատրաստվել, որի հիման վրա էլ ուսուցիչները ատեստավորվել են:

18. 04. 2023թ.

«Համագործակցային կրթական ծրագրեր» հկ

Երբ ներդրվում է նախագիծ, որը միտված է բարեփոխումների իրականացմանը, սակայն չկա հետևողական մոտեցում՝ ապահովելու որակ և արդյունավետություն

Դեռևս 2022թ. հունիսի 9-ին կայացած ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի նիստում, հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման համակարգի գործարկման խնդիրների և բացերի վերաբերյալ մեր կազմակերպության զեկույցին ի պատասխան, փոխնախարարի պաշտոնը զբաղեցնող այժմ նախարար Ժաննա Անդրեասյանը նշեց, որ կիրառվելու է վերապատրաստման տարբերակված քաղաքականություն՝ սկսնակ և մեծ փորձառություն ունեցող ուսուցիչների համար՝ տարբեր մեխանիզմների, ժամկետների և բովանդակության առումով, վստահեցրեց, որ նոր համակարգի կիրառման դեպքում զեկույցի ընթացքում բարձրաձայնված խնդիրների մեծ մասը դուրս են գալու օրակարգից, հավաստիացրեց, որ անբարեխիղճ կազմակերպությունները դուրս են գալու ուսուցիչներին վերապատրաստող կազմակերպությունների ցանկից՝ կարևորելով համապատասխան էթիկայի և գործելաոճի ձևավորումը, տեղեկացրեց, որ մինչև տարեվերջ (2022թ) պատրաստ կլինի համապատասխան տեղեկատվական հարթակը, որպեսզի ապահովվի աշխատանքների ամբողջական թվայնացում, ինչպես նաև հասանելիություն և թափանցիկություն:

https://escs.am/am/news/12867?fbclid=IwAR1S6dCWvgDQJTN4nuJfogj59HR6RDJ8hnx3R65EGHJlRu2nxT4zWtthEmI

Տեղեկանալու համար թե ինչ աշխատանքներ են կատարվել 2022թ-ի հունիսի 9-ից հետո ուսուցիչների վերապատրաստումների նոր ներդրված համակարգը բարելավելու ուղղությամբ, հարցում ուղարկեցինք տիկին Անդրեասյանին, ով անցած տարի հստակ նախանշել էր բարեփոխումների բովանդակությունը:

https://drive.google.com/file/d/1XcAuLZIdrk7DXhHH5faxG0_xtaID0q7b/view?fbclid=IwAR12ZomguFf8_P2F23rKKp4Y1yLJmVzV0HxMKFevQA1exPJjMwwrK7Xtz9s

Մեր հարցմանը պատասխանեց փոխնախարար Արաքսիա Սվաջյանը, ում պատասխանից պարզ է դառնում, որ Ժաննա Անդրեասյանի անցած տարվա նախանշած, խոստացված բարեփոխումների ուղղությամբ գրեթե 1 տարի է ոչինչ չի արվել նախարարությունում: Պատասխանում պարզապես տեխնիկական բնույթի մեջբերումներ էին «Հանրակրթության մասին» օրենքից և մինչև 2022թ-ը ընդունված կառավարության որոշումներից:

Նախարարության ամբողջական պատասխանին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝

https://drive.google.com/file/d/1VIkdQF9wpXOB20hYMqbTEdKSH_sK_zTp/view?fbclid=IwAR2IeN1ObE0vm57UP4fSl0EveZuzDG7tvSy8JVdBlZrxhKuKCWloUZ692Mg

Եթե անհրաժեշտ բարեփոխումները չեն իրականացվել, ապա այս տարի նույնպես ուսուցիչները վերապատրաստվելու են համակարգում գոյություն ունեցող բազմաթիվ թերությունների առկայությամբ:

Ստացվում է պետական լիազոր մարմինը՝ ԿԳՄՍՆ, Հանրակրթության պետական նոր չափորոշչի https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 համաձայն, ուսուցիչներից պահանջում է նոր հմտություններ, ունակություններ, սակայն պատշաճ աջակցում կազմակերպել և ցուցաբերել չի կարողանում: